Արձանագրություն N 2
«ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4 **«07» «03» 2018թ**
ժ.12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Նազարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Զուխաջյանը,
Ա.Ստեփանյանը, Հ.Պողոսյանը, Գ.Մաթոսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. **Գնանշման հարցման հայտերի բացման մասին**

(Գ. Նազարյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Մարի-Ստեգ» ՍՊԸ	-	
2.	«Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ	-	
3.	«Կրթարան Սոնա» ՍՊԸ	-	

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	«Մարի-Ստեգ» ՍՊԸ		«Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ		«Կրթարան Սոնա» ՍՊԸ	
		Չի հանդիսանում ԱԱՀ վճարող	ընդամենը	առանց ԱԱՀ	ընդամենը	Չի հանդիսանում ԱԱՀ վճարող	ընդամենը

1	Անգլերենից հայերեն	-	4000000	-	3780000	-	4400000
2	Հայերենից անգլերեն	-	4000000	-	3780000	-	4400000
3	Ռուսերենից հայերեն	-	390000	-	417000	-	600000
4	Հայերենից ռուսերեն	-	390000	-	417000	-	600000

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.

Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները		
			Մասնակցի անվանումը		
			«Մարի-Ստեգ» ՍՊԸ	**«Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ**	**«Կրթարան Սոնա» ՍՊԸ**
1	Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին	Բավարար Անբավարար	բավարար	բավարար	բավարար
2	Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.	Բավարար Անբավարար	բավարար	բավարար	անբավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		**Բավարար Անբավարար**	**բավարար**	**բավարար**	**անբավարար**

Որոշում թիվ 3.

Հանձնաժողովը որոշեց «Մարի-Ստեգ» ՍՊԸ-ի, «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են և մերժել «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի կազմման ձևը չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապամաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել.

-1-2-րդ չափաբաժինների մասով «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ -ին,

- 3-4-ոդչափաբաժինների մասով «Մարի-Ստեգ» ՍՊԸ -ին .

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ կետը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ծանուցել իրենց՝ որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչվելու մասին :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Նազարյան)

Որոշում թիվ 6.

Հանձնաժողովը որոշեց «ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Նազարյան

Անդամներ՝ _____ Ա. Չուխաջյան

_____ Ա.Ստեփանյան

_____ Հ. Պողոսյան

_____ Գ. Մաթոսյան

Քարտուղար՝ _____ Հ.Ղազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան, Կոմիտաս 49/4 «07» «03» 2018թ

«ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Նազարյանս, անդամներ՝ Ա.Չուխաջյանս, Ա.Ստեփանյանս, Հ.Պողոսյանս և Գ.Մաթոսյանս հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ «ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ.Նազարյան

Անդամներ՝ _____ Ա.Չուխաջյան

_____ Ա.Ստեփանյան

_____ Հ.Պողոսյան

_____ Գ.Մաթոսյան